ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Պետական ոչ առևտրային կազմակերպություն

0005, Երևան, Բուռնազյան 37, հեռ.՝ 57-84-53, 57-84-55, կայք՝ www.ktak.am, էլ. փոստ՝ info@ktak.am

«Յունիքոմփ» ՓԲԸ-ին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 37,
հեռ. 041 05 81 11,
ՀՎՀՀ 01815551
էլեկտրոնային փոստ *info@unicomp.am*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագրի լուծվելու վերաբերյալ

Հարգելի պարոն Բալդրյան,

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Յունիքոմփ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 26.09.2023թ. կնքվել է Պետության կարիքների համար քննական կենտրոնների ստեղծման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների մատակարարման N «ԿՏԱԿ-ԲՄԱՊՁԲ-23/05-1» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագիրը կնքվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և Պայմանագրի կնքմանը հաջորդող 6 ամսվա ընթացքում չեն հատկացվել ֆինանսական միջոցներ:

Պայմանագիրը լուծվում է օրենքի ուժով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը և Պայմանագրի 8.12 կետը համաձայն որի՝ «Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:»

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով Պայմանագրի լուծման մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագրի լուծվելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրն լուծվելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Ծանուցումը հրապարակվում է 2024թ. մարտի 28-ին:

Տնօրեն՝ Արտակ Պողոսյան